

սմ. մեծութեամբ, 1081 երես) եւ 1792ին ընդօրինակութիւն մը ի մատենադարանի Ս. Էջմիածնի (վարենեանց, անդ, էջ 7):

3. “Գիրք եօթն խորհրդոց Եկեղեցւոյ”:

4. “Գիրքն որ կոչի Լուսաւորութիւն խոստովանութեան”, թարգմ. 1725ին. յԱզգ. Մատենադարանի ի Կ. Պոլ.: Կը գտնուի նաեւ Էջմիածին այլեւայլ օրինակներ, ըստ վարեն. անդ էջ 41. “Կուլեմնսի վեփենեան՝ Լուսաւորութիւն խոստովանութեան... թրգմ. ի Ղ. Վ. է խարբերոցւոյ...”:

5. “Գիրքն որ կոչի Անտառ այլաբանութեան, յերկուս հատորս բաժանեալ:” Հեղինակ՝ Հերոնիմոս Լաւուռէթօ. Ազգ. Մտորնի. օրինակին ճակատի թուական 1733. Յիշատակարանի թուական՝ 23 Յունիս 1740, եւ Յիշատակարան Տ. Կր. Քահանայի 29 Յունիս 1744. էջք 1826: Իսկ Էջմիածնի օրինակն երեւի նախնականն (վարեն. էջ 3) “Անտառ այլաբանութեանց բոլոր սուրբ գրոց մեծագիր եւ շաղագիր երկու հատոր գրեալ ի թուղթ բամբակի, գրիչն անյայտ, բաժանեալ է յերկուս հատորս, արարեալ է Հերոնիմոս մականուանեալ Լաւուռէթոս Չերվաուինսիոյ կրօնաւորէ ի կարգէ Պենետիկոսի, եւ թարգմանեալ է ի Լատինականէ Ղուկաս Վ. Ն խարբերոցի. ի թուին Հայոց ՌՃԿԸ 1728 (հայ թուականին կը համապատասխանէ՝ 1719!) առաջին հատորն թարգմանեալ. երկրորդն ՌՃՁԶ 1736” (1737!):